

U
1121

12-00-06

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆԻ

ՍԱՐԳՈՒ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԺԲ.00.06 – «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2015

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ

АКОПЯН КАРИНЭ СТЕПАНОВНА

ЭКОЛОГИЧЕСКИЕ ПРАВА ЧЕЛОВЕКА И
МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЙ ИНСТРУМЕНТАРИЙ ИХ
ГАРАНТИРОВАНИЯ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени
кандидата юридических наук по специальности:
12.00.06. – «Международное право»

Ереван 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Բ. Վարվազ
իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Տ. Խզմայան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոն

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. մայիսի 30-ին ժամը 11⁰⁰-ին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի միասում (0051, ք.Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2015թ. ապրիլի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վ. Հ. Սարգսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор В. А. Оганесян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор Л.И. Волова
кандидат юридических наук А.Т. Хзмалян

Ведущая организация: Центр конституционного права

Защита состоится 30 мая 2015г. в 11⁰⁰ часов на заседании Специализированного совета ВАК РА 063 при Российско-Армянском (Славянском) университете (ул. Овсепя Эмина 123 Ереван, 0051, Армения)

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 30 апреля 2015г.



11-1628

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук, доцент

К.Г. Сардарян

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Երջակա միջավայրի պահպանության և պաշտպանության հարցերն արդեն ավելի քան 30 տարի գտնվում են համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում: Չմայած ձեռնարկված միջոցառումներին, այսօր էկոլոգիական աղետի վտանգները, որքան էլ տարօրինակ է, ոչ միայն չեն կորցնում իրենց սրությունը, այլև ձեռք են բերում ավելի խիստ բնույթ: Չափազանց մեծ մտահոգություն է առաջացնում բնության վրա մարդու ազդեցությունը: Գիտատեխնիկական զարգացումը և մարդու տնտեսական գործունեությունը, նոր տեխնոլոգիաների ներդրումն զգալի վնաս են հասցնում շրջակա միջավայրին և հանդիսանում են աշխարհում էկոլոգիական վիճակի վատթարացման հիմնական պատճառը: Էկոհամակարգի առանձին օբյեկտներ գտնվում են միմյանց հետ սերտ փոխազդեցության մեջ, ինչի արդյունքում դրանցից որևէ մեկին հասցված ցանկացած վնաս հանգեցնում է շրջակա միջավայրի համար անբարենպաստ փոփոխությունների:

Երջակա միջավայրի որակի վատթարացման պատճառներից է ինչպես համաշխարհային հանրության կողմից համարժեք հակազդեցության բացակայությունը, որն ի թիվս այլնի պայմանավորված է էկոլոգիական վտանգների հիմնական մասի անդրսահմանային բնույթով, այնպես էլ մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորման իրապես արդյունավետ միջազգային կառուցակարգերի գոյությանը: Ինչպես վկայում է միջազգային հարաբերությունների պրակտիկան, կյանքի ցանկացած ոլորտում առկա իրավահարաբերությունների կարգավորման հարցում առավել հեշտ է բարձր արդյունքի հասնել, եթե փորձ է արվում իրավակարգավորման մեթոդաբանությունը կառուցել մարդու իրավունքների գերակայության ճանաչման վրա: Մարդու էկոլոգիական իրավունքների պահպանությունը այնպիսի հրամայական է, որը իր առաջնայնությամբ նույնիսկ պետք է «ստվերի» բնական ռեսուրսների օգտագործման հետ կապված պետությունների տնտեսական բնույթի թեկուզ օրինական շահերը: Ուստի, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միջազգային համագործակցության և միջազգային իրավական կարգավորման զարգացումը առանց մարդու էկոլոգիական իրավունքների պաշտպանության միջազգային կառուցակարգերի առկայության կկրի ձևական և խիստ մակերեսային բնույթ:

Էկոլոգիական հիմնախնդիրների գլոբալ բնույթը և դրանց լուծումը պահանջում են միասնական նորմերի և սկզբունքների ամրագրում, որոնցով կղեկավարվեն միջազգային հանրության բոլոր մասնակիցները: Վերոնշյալը հիմնավորում է այն գաղափարը, որ հասունացել է շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ոլորտում միասնական ունիվերսալ միջազգային իրավական ակտի ընդունման պահը, որն իրենից կներկայացնի

միջազգային էկոլոգիական իրավունքի կողմնակից կազմակերպությունները:

Այնօր շրջակա միջավայրի պահպանությունն անխզելիորեն կապված է մաս կալում գարգացման հայեցակարգի հետ: Գնալով ավելի են ամրապնդվում շրջակա միջավայրի վիճակի և տնտեսական ու սոցիալական ոլորտների փոխակապակցվածության միտումները:

Վերոնշյալով պայմանավորված է հետազոտության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության հեղինակն իր առջև նպատակ է դրել ունիվերսալ և տարածաշրջանային պայմանագրերի և կոնվենցիաների, ինչպես նաև միջազգային իրավական ակտերի բազմակողմ և խոր ուսումնասիրության հիման վրա վեր հանել մարդու էկոլոգիական իրավունքների և դրանց երաշխավորման ոլորտում առկա միջազգային իրավական կարգավորումների թերությունները և առաջարկել դրանց վերացմանն ուղղված լուծումներ: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են նաև միջազգային ինստիտուցիոնալ բնապահպանական կառուցակարգերի և դատական մարմինների իրավասություններն ու գործառնությունները, բացահայտվել են դրանց գործունեության առանձնահատկությունները և թերությունները:

Ատենախոսի նպատակն է եղել նաև իրականացնել բնապահպանական կոնվենցիաների համեմատական վերլուծություն, դրանց փոխհարաբերակցության և փոխգործողության ժամանակ ծագող այլ հիմնահարցերի ուսումնասիրություն:

Ատենախոսությունը շարադրելիս հեղինակն իր առջև խնդիր է դրել գտնել հետևյալ հարցերի պատասխանները.

- որքան արդյունավետ են այսօր գործում շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման ոլորտին վերաբերող միջազգային կոնվենցիաներն և ինստիտուցիոնալ կառուցակարգերը,

- արդյոք ունիվերսալ և տարածաշրջանային կոնվենցիաները լրացնում են միմյանց, թե՛ ոչ, դրանք ներդաշնակ են, թե դրանց միջև առկա է որոշակի հակասություն,

- շրջակա միջավայրի պահպանության մասին ունիվերսալ նոր կոնվենցիայի նախագծի մշակման հետ կապված ինչպիսի խնդիրներ գոյություն ունեն և որոնք են դրանց լուծման ուղիները:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը և հետազոտության տեսական հիմքը:

Միջազգային իրավունքում մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորման ինստիտուտի վերաբերյալ հայ իրավագիտության մեջ տեսական խորը և համապարփակ ուսումնասիրություններ գրեթե բացակայում են, սակայն հայրենական առանձին հեղինակներ իրենց աշխատություններում որոշ չափով անդրադարձել և վերլուծել են ուսումնասիրվող հիմնախնդրի առանձին ասպեկտները: Դրանցից հատկապես կարելի է առանձնացնել Ա.Բ. Իսկոյանի, Օ.Մ. Գեղամյանի աշխատությունները, որոնք, այդուհանդերձ, մարդու

էկոլոգիական իրավունքների երաշխավորման միջազգային իրավական գործիքակազմին անմիջականորեն չեն վերաբերում: Հարկ ենք համարում ընդգծել, որ հայաստանյան իրականության մեջ մինչև սույն ատենախոսական հետազոտությունը թեմային առնչվող հիմնախնդիրները հիմնականում լուսաբանվել են խորհրդային և ռուսական միջազգայնագետների գիտական աշխատություններում: Դրանց շարքում կարելի է նշել Ա.Մ. Սոլնցևի, Է.Ֆ. Պուշկարյովի, Լ.Դ. Պրոկոֆևի, Է.Յու. Կուզնեցկոյի և այլոց աշխատությունները:

Ատենախոսության տեսական հիմքը շրջակա միջավայրի պահպանության միջազգային իրավական կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությանը վերաբերող դասական մշակակության աշխատանքները, մենագրությունները և գիտական հոդվածներն են:

Ատենախոսությունը շարադրելիս հեղինակը հիմնվել է հետևյալ իրավաբան-միջազգայնագետների՝ Մակլոդ Ն. Շոուի, Շ. Յ. Մակկաֆրեյի, Պ.Վ. Բիրնիի և Ա.Ե. Բոյլիի, Բ. Մակգիլիվայի, Է. Բ. Վեյսի, Ա. Զիսսի, Դ. Շեյքհի, Ռ.Մ. Վալենի, Ա.Հ. Արաշիձեի, Ա.Մ. Սոլնցևի, Մ.Ն. Կոպիլովի, Կ.Ա. Բեկյաշևի, Ս.Ա. Բոգոլյուբովի, Մ.Մ. Բրինչուկի, Ի.Ի. Լուկաշուկի, Ն.Ն. Մարֆենիճի, Լ.Մ. Էնտինի, Ա.Բ. Իսկոյանի և այլոց աշխատանքների վրա:

Ատենախոսության նորմատիվային հիմքը:

Հետազոտության նորմատիվ իրավական հիմքն Ազգերի լիգայի, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, Ամերիկյան պետությունների կազմակերպության, ԱՊՀ, Արաբական պետությունների լիգայի, «Եսլամական կոնֆերանս» կազմակերպության և այլ կազմակերպությունների շրջանակներում ընդունված շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ կոնվենցիաները, բանաձևերը և այլ փաստաթղթերն են, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները: Բացի դրանից, հետազոտության շրջանակներում իրականացվել է ՀՀ-ի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Կանադայի, Հունգարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և մի շարք այլ պետությունների՝ շրջակա միջավայրի վերաբերյալ ազգային օրենսդրության և միջազգային կոնվենցիաների դրույթների համեմատական վերլուծություն:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, պատմական և սոցիոլոգիական մեթոդներ): Աշխատանքում լայնորեն օգտագործվել է համեմատական-իրավական մեթոդը: Նշված մեթոդների համակցված կիրառումը հնարավորություն է տվել վեր հանել շրջակա միջավայրի միջազգային իրավական պահպանության այնպիսի հատկանիշներ, որոնք թույլ են տալիս դրանք դիտարկել իրավական կարգավորման արդյունավետության տեսանկյունից՝ միաժամանակ հաշվի առնելով ինչպես դրանց համակարգի և աստիճանակարգության վրա ազդող համընդհանուր (գլոբալ) միտումները, այնպես էլ ազգային իրավական համակարգերի ավանդույթներով և առանձնահատկություններով պայմանավորված տարբերությունները:

Գիտական նորույք: Ատենախոսության հեղինակին հաջողվել է Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդրի համատեքստում վերլուծել և բացահայտել միջազգային էկոլոգիական իրավունքի ձևավորման ու զարգացման իրավական հայեցակարգերը և դրա բաղադրատարրերը:

Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ միջազգային պայմանագրերի և կոնվենցիաների, ինչպես նաև միջազգային ակտերի ուսումնասիրության հիման վրա աշխատանքում վեր են հանվել մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորման հայեցակարգային հիմքերը, կոնվենցիոն և ինստիտուցիոնալ կառուցակարգերը:

Գիտական նորույք են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող տեսական և գործնական դրույթները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները և եզրահանգումները:

1. ՄԱԿ-ի կանոնադրության որևէ հոդվածում չկա անմիջական նշում շրջակա միջավայրի պաշտպանության, պահպանության, բնական ռեսուրսների ռազիոնալ օգտագործման կամ կայուն զարգացման վերաբերյալ, ինչը բացատրվում է նրանով, որ 1945թ. դրությամբ շրջակա միջավայրի պահպանության հետ կապված խնդիրները դեռևս չունեին այնպիսի համամարդկային կարևորություն, ինչպիսին ունեցան հետագայում: Այդուհանդերձ, ՄԱԿ-ի կանոնադրության վերլուծությունը հիմք է տալիս պնդել, որ այն խոր և «թաքնված» իրավական-քաղաքական նախադրյալներ է պարունակում միջազգային կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետությունների համագործակցությունը խթանելու համար: Որպես ասվածի ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ ՄԱԿ-ի կողմից հետագայում ձևավորված մասնագիտացված մարմինները, հենվելով հենց ՄԱԿ-ի կանոնադրության վրա, որպես կանոնադրական նպատակ, ի թիվս այլնի, նախատեսեցին նաև շրջակա միջավայրի պահպանությունը և պաշտպանությունը: Վերոնշյալ եզրահանգման համար կարևոր իրավական հիմք է հանդիսանում Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969թ. Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված իրավադրույթը, համաձայն որի պայմանագրի մեկնաբանման ժամանակ պետք է հաշվի առնել նաև պայմանագրի կիրառման հետագա պրակտիկան, որը սահմանում է դրա մեկնաբանման վերաբերյալ մասնակիցների համաձայնությունը:

2. ՄԱԿ-ի ստեղծումը և այդ կազմակերպության կողմից միջազգային համընդհանուր անվտանգության սկզբունքի ճանաչումը և կրաշխավորումը՝ որպես միջազգային իրավական իմպերատիվ, ի թիվս այլնի, նպաստեց մարդու՝ առողջ և բարենպաստ միջավայրում ապրելու հայեցակարգի հիմքի վրա մարդու *jus cogens* բնույթի էկոլոգիական իրավունքների ձևավորմանը և դրանք որպես *erga omnes* պարտավորություն ճանաչմանը: Ատենախոսության մեջ այս դիրքորոշումը, ի թիվս

այլնի, հիմնավորվում է այն հանգամանքով, որ մարդու էկոլոգիական իրավունքները, որպես *jus cogens* (իմպերատիվ) նորմեր ունեն նաև համընդհանուր բնույթ, քանի որ դրանք վերաբերում են համամարդկային արժեքների պաշտպանությանը և որ էկոլոգիական անվտանգության սկզբունքի բովանդակությունը պարտավորեցնում է պետություններին իրենց գործունեությունը իրականացնել այնպես, որ միջազգային անվտանգության շահերից ելնելով, բացառվի այնպիսի էկոլոգիական ցնցումները, որոնք կարող են անդառնալի և անվերականգնելի վնաս պատճառել ինչպես այլ պետություններին, այնպես էլ միջազգային հանրությանը ամբողջությամբ վերցրած:

Ատենախոսն իր այս դիտարկումը, հիմնավորում է նաև հենվելով հատկապես ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին և 55-րդ հոդվածների վերլուծության վրա:

3. Ատենախոսի կարծիքով առողջ շրջակա միջավայրի իրավունքը, ինչպես նաև էկոլոգիական այլ իրավունքները՝ սոցիալական խնդիրների լուծման առանձնահատկությամբ պայմանավորված և մարդու առողջ կյանքի ու ֆիզիկական գոյության երաշխավորման հնարավորությամբ բողոքովին մոր ինքնուրույն իրավունքներ են և էապես տարբերվում են նախորդ սերունդների իրավունքներից (անձնական, քաղաքական և կոլեկտիվ): Էկոլոգիական իրավունքները՝ իրենց հատուկ կարևորությամբ պայմանավորված, համամարդկային բնույթ ունեն: Դրանք խորապես հաշվի չառնելու պարագայում անիմաստ է խոսել առհասարակ մարդու կյանքի և զարգացման երաշխիքների մասին:

Առանց մարդու էկոլոգիական իրավունքները՝ որպես նոր՝ չորրորդ սերնդի համամարդկային իրավունքների ճանաչման, անհնարին է ժամանակակից մարտահրավերների պայմաններում երաշխավորել մարդու կյանքի իրավունքի պաշտպանությունը: Աստիճանաբար, էլ ավելի է խորանում մարդու կյանքի իրավունքի և Երկիր մոլորակի էկոհամակարգերի օրգանական կապը, ուստի չորրորդ սերնդի իրավունքների համակարգում մարդու՝ էկոլոգիապես անվտանգ պայմաններում ապրելու իրավունքը պետք է դիտվի որպես նրա կյանքի իրավունքի իրավաբանական բովանդակության կարևորագույն բաղադրատարր:

4. Մարդու իրավունքների համակարգում էկոլոգիական իրավունքների զբաղեցրած հատուկ տեղը պայմանավորված է հատկապես այն փաստով, որ դրանք ինքնուրույնաբար արտահայտվել են նաև մարդու իրավունքների համակարգի մեջ մտնող մյուս բոլոր ենթաճյուղերում: Այսպես, անձնական իրավունքները կանխորոշում են մարդու, նրա առողջության և գույքի նկատմամբ անօրինական միջամտությունից պաշտպանվածությունը, այդ թվում նաև՝ շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունից պաշտպանության իրավունքը: Քաղաքական իրավունքները ներառում են, օրինակ, էկոլոգիային վերաբերող որոշումների կայացման գործընթացին անձի մասնակցության իրավունքը: Մարդու սոցիալական և տնտեսական իրավունքները կոչված են ապահովելու նրա

արժանապատիվ կենսամակարդակը՝ հաշվի առնելով էկոլոգիական բնութագրիչները, էկոլոգիական կրթության իրավունքը և այլն:

5. «Էկոլոգիական անվտանգություն» հասկացությունն ունի մի քանի բաղադրիչներից կազմված կոնկրետ իրավաբանական բովանդակություն: Դրանք են. ա) պետությունների պարտավորությունն ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, որակյալ վերարտադրությունն այնպես, որպեսզի չվնասվեն ոչ միայն առանձին պետությունների, այլև համաշխարհային հանրության իրավունքները և օրինական շահերը, բ) յուրաքանչյուր պետություն պարտավոր է գործել այնպես, որպեսզի հավասարապես մեղմվի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունն ինչպես ազգային, տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մակարդակներում, գ) մարդու էկոլոգիական անվտանգությունը երաշխավորող միջազգային պայմանագրային պարտավորությունները, հանդիսանալով միջազգային հանրային իրավունքի բաղկացուցիչ, իրենց էությունը, առանձնահատկությամբ և նպատակային ուղղվածությամբ պայմանավորված պետք է ճանաչվեն բարձր կատեգորիալ արժեքներ:

6. Միայն միջազգային իրավունքի առաջադիմական զարգացման «դանդաղկոտությամբ» կարելի է վերագրել այն տարօրինակ փաստը, որ մինչ օրս անվտանգ շրջակա միջավայրում ապրելու մարդու բնական իրավունքն ուղղակիորեն և հստակ ոչ մի միջազգային իրավական ունիվերսալ փաստաթղթում անմիջականորեն ամրագրված չէ: Սինչեռ, ոչ միայն միջազգային փաստաթղթերում, այլ նաև բոլոր պետությունների սահմանադրություններում էկոլոգիական հարաբերությունների իրավակարգավորման հիմնական մեթոդաբանական հիմքը պետք է կազմի մարդու անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի և այլ էկոլոգիական իրավունքների իմպերատիվը: Մարդու էկոլոգիական իրավունքներն իրենց հույժ կարևորությամբ, համաճորտակային նշանակությամբ բոլորովին այլ կատեգորիալ արժեքներ են: Առանց դրանց ավելորդ է խոսել առհասարակ մարդու կյանքի և զարգացման երաշխիքների մասին:

7. Ատենախոսը գտնում է, որ մարդու էկոլոգիական իրավունքների պահպանությունը այսօր ձեռք է բերել առավել առաջնային բնույթ, քան նույնիսկ պետությունների տնտեսական և արդյունաբերության զարգացման անհրաժեշտությամբ պայմանավորված թեկուզ օրինական շահերը: Ուստի, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միջազգային համագործակցության և միջազգային իրավական կարգավորման զարգացումը առանց մարդու էկոլոգիական իրավունքների գերակայության ճանաչման, դրանց պաշտպանության միջազգային իրավական կառուցակարգեր կկրեն խիստ ձևական բնույթ:

8. Շրջակա միջավայրի պաշտպանության իրավական երաշխավորման

աշխատանքներին ներկայումս անդրադառնում են ինչպես մարդու իրավունքների միջազգային դատարանները, որոնց կողմից քննվող գանգատների քիվն աստիճանաբար ավելանում է, այնպես էլ ՄԱԿ-ի միջազգային դատարանը: Թեև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում շրջակա միջավայրի պահպանության իրավունքն անմիջականորեն ամրագրված չէ, այդուհանդերձ, այդ իրավունքի պաշտպանությունը ՄԻԵԴ-ում այսօր իրականացվում է բավականին արդյունավետ: Քննված գործերով Դատարանի իրավական դիրքորոշումների բովանդակային վերլուծությունը բույլ է տալիս պնդել, որ այս ոլորտում ձևավորված նախադեպային իրավունքի միջոցով Դատարանն առողջ շրջակա միջավայրի իրավունքի պաշտպանությունը հասցրել է կոնվենցիոն մակարդակի: Ատենախոսը գտնում է, որ հիմնախնդրի կարևորությունը նկատի ունենալով՝ անհրաժեշտ է ՄԻԵԴ-ի արդեն ձևավորված իրավական դիրքորոշումների հիման վրա, ի լրումն 1950թ. Եվրոպական կոնվենցիայի, ընդունել նոր Արժանագրություն և դրանում մարդու՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը ճանաչել որպես անմիջականորեն գործող բնական իրավունք:

9. Միջազգային էկոլոգիական իրավունքի ներկա առաջադեմ հայեցակարգը ձևավորվեց շնորհիվ XX դարի երկրորդ կեսերին բնության պահպանության հարցում պետությունների միջազգային ընտանիքի գրեթե բոլոր անդամների պատրաստակամության՝ շրջակա միջավայրի պաշտպանության հարցում «պետական ինքնիշխանության» իրենց անօտարելի իրավունքն ստորադասել «միջազգային հարևանության իրավունքի» շահերին: Եթե սալվածի համատեքստում շրջակա միջավայրի պահպանության հարցում պետությունների՝ իրենց ինքնիշխանությունից հրաժարումը գիտակցված բարի կամք էր, ապա դրա հիման վրա ընդունված ՄԱԿ-ի կանոնադրության հիմքի վրա հետագայում ձևավորված բնապահպանական կոնվենցիոն և ինստիտուցիոնալ միջազգային իրավական կառուցակարգերը պետություններին ներառան այնպիսի պարտավորական հարաբերությունների շրջանակում, որից ներկայումս ցանկացած հիմնավորմամբ դուրս գալը *ipso facto* ենթադրում է մարդկությանն ուղղված մարտահրավեր:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության արդյունքում ձևավորված եզրահանգումները կարող են օգտագործվել շրջակա միջավայրի պահպանության իրավական հարցերին առնչվող գիտական ուսումնասիրություններ կատարելիս, ինչպես նաև իրավաստեղծ գործունեության ընթացքում: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել տարբեր բուհերի իրավաբանական ֆակուլտետներում միջազգային իրավունքի դասավանդման գործընթացում:

Հետազոտության արդյունքների կիրառական փորձարկումները:

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի խորհրդի կողմից, որը քննարկել է

ատենախոսությունը բովանդակող հիմնական տեսական դրույթները և եզրահանգումները: Տեսական եզրահանգումները և դրույթները ներկայացվել և ապացուցվել են գիտական կոնֆերանսներում և սեմինարներում: Հետազոտության հիմնական տեսական դրույթները և եզրահանգումներն արտացոլված են նաև հեղինակի գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը ձևավորվել է հաշվի առնելով հետազոտության նպատակը և առարկան: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլխից, ընդհանուր տասը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալն է 184 մեքենագիր էջ:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, ատենախոսության մշակվածության աստիճանը և տեսական հիմքը, նորմատիվային հիմքը, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները և եզրահանգումները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների կիրառական փորձարկումները և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխից, որը կրում է «*Միջազգային էկոլոգիական իրավունքի ձևավորումը և առաջադիմական զարգացումը*» վերտառությունը բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «*Միջազգային էկոլոգիական իրավունքի առաջադիմական զարգացումը*» վերտառությամբ, հեղինակի կողմից ներկայացվում են ժամանակակից աշխարհի էկոլոգիական իրավիճակը, առկա հիմնախնդիրները, «էկոլոգիա» եզրույթի ծագումնաբանության պատմությունը, ինչպես նաև վերլուծության է ենթարկվում էկոլոգիական իրավունքին վերաբերող առաջին միջպետական և միջազգային իրավական ակտերը: Այս պարագրաֆում անդրադարձ է կատարվել Ազգերի լիգայի, հետագայում նաև ՄԱԿ-ի շրջանակներում միջազգային էկոլոգիական իրավունքի ձևավորման և առաջադիմական զարգացման պատմությանը: Մանրամասն ներկայացվել են միջազգային էկոլոգիական իրավունքի ժամանակագրական զարգացման ընթացքը և ընդունված միջազգային պայմանագրերի և հռչակագրային բնույթ ունեցող փաստաթղթերի իրավաբանական բնույթը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆը՝ «*Միջազգային էկոլոգիական իրավունքը և մարդու իրավունքների միջազգային իրավունքը*» վերտառությամբ, նվիրված է մարդու էկոլոգիական իրավունքների ուսումնասիրությանը: Այստեղ մանրամասն ներկայացվել է մարդու իրավունքների սերունդների դասակարգման մեջ մարդում

էկոլոգիական իրավունքների առանձնահատուկ տեղը: Հեղինակը համեմատական վերլուծության արդյունքում առաջ է քաշում մարդու իրավունքների չորրորդ սերնդի ձևավորման անհրաժեշտության գաղափարը: Բազմակողմանի վերլուծության է ենթարկվել էկոլոգիական իրավունքների՝ որպես մարդու և քաղաքացու բնական և հիմնական իրավունքների սուբյեկտիվ բնույթը, ինչը ենթադրում է նաև նրա՝ ապահով և անվտանգ բնակլիմայական պայմաններում գոյատևելը, բարենպաստ շրջակա միջավայրի երաշխավորմանը մասնակցելը, ինչպես նաև ուրիշներից պահանջելը՝ պահպանել իրավունքի այն նորմերը, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պահպանությանը, իսկ այդ իրավունքների խախտման կամ խախտման վտանգի դեպքում համապատասխան պետական և միջազգային մարմինների պաշտպանությանը դիմելը:

Ըստ հեղինակի, մարդու իրավունքների չորրորդ սերնդում պետք է ամփոփվեն այնպիսի իրավունքներ, որոնց պաշտպանության քիթախում կլինի ոչ միայն մարդը՝ իր առողջությամբ, բարեկեցությամբ, այլև բնական աշխարհը: Դրանք պետք է ընկալվեն որպես համաձուլորակային արժեքներ:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «*Մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորման հայեցակարգային և կոնվենցիոն կառուցակարգերը*» վերտառությամբ, կազմված է չորս պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «*Մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորումը կայուն զարգացման հայեցակարգի համատեքստում և միջազգային իրավունքը*» վերտառությամբ, հեղինակը ներկայացնում է Կայուն զարգացման հայեցակարգի ձևավորման պատմական ակունքները, դրա հիմքում ընկած կանխադրույթները: Վերլուծության է ենթարկվել կայուն զարգացման բաղադրիչների՝ տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի պահպանության փոխկապակցված և փոխլրացնող բնույթը: Նշվում է, որ այն իրենից ներկայացնում է վերոնշյալ երեք բաղադրիչների միահյուսումը և որ հաշվի առնելով այդ հանգամանքը՝ իսկապես բարդ է հստակորեն ուրվագծել հայեցակարգի հիմքում ընկած տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչների սահմանները: Այս պարագրաֆում ուսումնասիրվել է տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի վրա ազդեցության հարաբերակցության հիմնախնդիրը, առանձնացվել է այդ ազդեցության առնվազն երկու դրսևորում: Ըստ ատենախոսի, նախ՝ զարգացումն անհնարին է առանց բնական ռեսուրսների օգտագործման, և երկրորդ՝ անխուսափելի են արտադրական և այլ գործընթացների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Հասնել զարգացման օպտիմալ արդյունքների՝ շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնելով, ահա սա է կայուն զարգացման հայեցակարգի հիմնական խնդիրը:

Հիշատակված պարագրաֆում հեղինակի կողմից ներկայացվել են նաև Կայուն զարգացման հայեցակարգի հիմքում ընկած սկզբունքների բովանդակությունը, մասնավորապես՝ նախախսագուշտության (*Precautionary principle*) և «վճարում է

աղտոտողը» (*Polluter pays principle*):

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «*Էկոլոգիական անվտանգության սկզբունքը միջազգային Էկոլոգիական իրավունքի արժեհամակարգում*» վերտառությամբ, հեղինակի կողմից ներկայացվել է ժամանակակից Էկոլոգիական-ճգնաժամային զարգացման պայմաններում «անվտանգություն» եզրույթի բովանդակության բացահայտմանը, դրա ոչ միայն ազգային, այլև միջազգային անվտանգության անբաժան բաղկացուցիչը լինելու հանգամանքի ամրագրմանը: Ընդգծվել է, որ Էկոլոգիական անվտանգությունը կայուն զարգացման պարտադիր նախապայման է և բնական համակարգերի պահպանության ու շրջակա միջավայրի համապատասխան որակի ապահովման անբաժան հիմքը:

Էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրության կարևորությամբ պայմանավորված՝ հեղինակի կողմից այն ներկայումս դիտարկվում է որպես միջդիսցիպլինար իրավական ինստիտուտ, որը ներառում է Էկոլոգիական և բնառեսուրսային իրավունքի նորմեր:

Հեղինակի պնդմամբ Էկոլոգիական անվտանգության սկզբունքի իրավաբանական բովանդակությունը ենթադրում է յուրաքանչյուր պետության պարտավորությունը գործել այնպես, որպեսզի հավասարապես մեղմվի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունն ինչպես տեղական, այնպես էլ գլոբալ մակարդակներում:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «*Մարդու Էկոլոգիական իրավունքների միջազգային կոնվենցիոն պաշտպանությունը*» վերտառությամբ, հեղինակի կողմից մանրամասն անդրադարձ է կատարվել 1998թ. Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիային, որն ընդունվել է դանիական Օրիոս քաղաքում: Ատենախոսության այս բաժնում հեղինակի կողմից ուսումնասիրվել է կոնվենցիայի հիմքում ընկած երեք «հեռախոսները», այն է՝ պետական մարմինների հստակ պարտավորությունները հասարակայնության առջև՝ տեղեկատվության մատչելիության, որոշումներ կայացնելու գործին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության ապահովման հարցերով:

Հիշատակված պարագրաֆի երեք ենթապարագրաֆներում հեղինակի կողմից առանձին առանձին վերլուծության են ենթարկվել կոնվենցիայում ամրագրված՝ բարենպաստ շրջակա միջավայրի, Էկոլոգիական տեղեկատվության մատչելիության, շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ արդարադատության մատչելիության իրավունքները:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «*Միջազգային Էկոլոգիական իրավունքի նորմերի իմպլեմենտացիան Հայաստանի Հանրապետության*

պրակտիկայում» վերտառությամբ նվիրված է Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ միջազգային Էկոլոգիական իրավունքի նորմերի իմպլեմենտացիայի հիմնախնդիրներին: Մանրամասն ուսումնասիրվել և համառոտ ներկայացվել է ՀՀ քրեական և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում Էկոլոգիական իրավունքների երաշխավորման հետ կապված հիմնահարցերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված և մարդու Էկոլոգիական իրավունքներին վերաբերող իրավախախտումների և 1977թ. «Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ բշնամական օգտագործումը արգելելու մասին» կոնվենցիայի և 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությամբ ամրագրված իրավախախտումների իրավաբանական բնույթին և դրանց դրսևորումների առանձնահատկություններին:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «*Մարդու Էկոլոգիական իրավունքների երաշխավորման ինստիտուցիոնալ կառուցակարգերը*» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆը՝ «*Մարդու Էկոլոգիական իրավունքների երաշխավորումը ՄԱԿ-ի շրջանակներում*» վերտառությամբ, ամբողջովին նվիրված է ՄԱԿ-ի համակարգում գործող ավելի քան 30 փոխկապակցված կազմակերպությունների կողմից մարդու Էկոլոգիական իրավունքների երաշխավորման արդի իրավիճակի վերլուծությանը: Ուսումնասիրվել են շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ՄԱԿ-ի համակարգում գործող մարմինների և հաստատությունների դերը, ինչպես նաև առանձին մասնագիտացված հաստատությունների, այդ թվում ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի գործառնությունները: Վերլուծության է ենթարկվել ՄԱԿ-ի համակարգում գործող առանձին ունիվերսալ մարմինների կողմից ուսումնասիրվող հիմնախնդրի առնչությամբ ձեռնարկված միջոցառումները: Ընդգծվել է այդ ունիվերսալ միջազգային կազմակերպության առանձնահատուկ դերը, այն է, որ նա, մի կողմից, համակարգում է պետությունների միջազգային իրավաստեղծ գործունեության ընթացքը, իսկ մյուս կողմից՝ իր հատուկ գործիքակազմի օգնությամբ հսկում է պետությունների կողմից շրջակա միջավայրի վերաբերյալ միջազգային իրավական նորմերի կատարման ընթացքը:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «*Մարդու Էկոլոգիական իրավունքների երաշխավորումը տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների կողմից*» վերտառությամբ, հեղինակի կողմից մանրամասն ներկայացվել է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում տարածաշրջանային այնպիսի հեղինակավոր կազմակերպության դերակատարությունը, ինչպիսիք են Եվրոպական տնտեսական հանձնաժողովը, Եվրոպական միությունը, Անկախ պետությունների համագործակցությունը, Աֆրիկյան միությունը, Ամերիկյան պետությունների կազմակերպությունների միությունը և Հարավարևելյան Ասիայի

տարածաշրջանային միջպետական կազմակերպությունը:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ «Մարդու էկոլոգիական իրավունքները և դրանց երաշխավորման հարցում միջազգային դատարանների գործառնական դերը» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆներից:

Չորրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Միջազգային դատարանների և քվազիդատական ինստիտուտների դերակատարությունը մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորման գործում» վերտառությամբ, հեղինակի կողմից ներկայացվել է շրջակա միջավայրի պաշտպանության հարցում միջազգային դատական հաստատությունների կողմից իրականացվող երկու տարբեր, սակայն փոխկապակցված գործառնությունները. մի կողմից՝ զգալի դերակատարությունը միջազգային իրավունքի նորմերի գործողության արդյունավետության բարձրացման հարցում, իսկ մյուս կողմից՝ պետությունների պատասխանատվության ինստիտուտի կատարելագործմանը նպաստելու հանգամանքը: Ուսումնասիրվել է շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման հետ կապված ՄԱԿ-ի միջազգային դատարանի նախադեպային իրավունքը: Միջազգային էկոլոգիական քվազիդատական ատյանի օրինակով ներկայացվել է ՄԱԿ-ի փոխհատուցման հանձնաժողովի գործունեության ընթացակարգերը և քննված գործերի իրավական բնույթը:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առաջացող վեճերի խաղաղ կարգավորման միջազգային դատական մարմիններից հիշատակել է Ծովային իրավունքի միջազգային տրիբունալը, որը գործող միջազգային դատական ատյաններից համեմատաբար աննախնդիր տարրն է:

Ատենախոսության մեջ ուսումնասիրվել է նաև ՄԱԿ-ի ԵՏՀ երկրների շրջանակներում մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորման հարցում գործուն դերակատարություն ունեցող այնպիսի մարմնի գործառնական դերակատարությունը ինչպիսի Օրհուսի կոնվենցիայի հիման վրա 2002թ. ստեղծված Համապատասխանության կոմիտեն է և էկոլոգիական արբիտրաժի և հաշտեցման միջազգային դատարանը:

Չորրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորման հիմնախնդիրը» վերտառությամբ, մասնամասն ներկայացվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպական կոնվենցիայի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված՝ մարդու էկոլոգիական իրավունքների խախտման վերաբերյալ գանգատները: Բացահայտել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի դերը մարդու էկոլոգիական իրավունքների միջնորդավորված պաշտպանության հարցում: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ուսումնասիրության արդյունքում հեղինակը հանգել է այն եզրակացությանը, որ թեև Կոնվենցիայում շրջակա միջավայրի

պահպանության իրավունքն անմիջականորեն ամրագրված չէ, այնուամենայնիվ, այդ իրավունքի պաշտպանության փաստը այս միջազգային ատյանում իրողություն է: Հեղինակը վստահաբար պնդում է, որ չնայած ՄԻԵԴ-ն իր կողմից ձևավորված պրակտիկայի համաձայն անուղղակի ձևով ճանաչում է մարդու այդ իրավունքները, այդուհանդերձ, ցանկալի է, որպեսզի Կոնվենցիայում անմիջականորեն ամրագրվի անձի էկոլոգիական իրավունքները:

Եզրակացությունում ընդգրկված են հետազատության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները, ինչպես նաև մարդու էկոլոգիական իրավունքների երաշխավորման կառուցակարգերի կատարելագործման առնչությամբ ներկայացված առաջարկությունները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

1. Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրված և առաջ քաշված հիմնախնդիրները, այդ թվում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ձեռնարկված միջոցառումների անարդյունավետությունը ոչ միայն գործող որոշ միջազգային իրավական նորմերի և սկզբունքների անկատարության, այլ նաև առանձին դեպքերում դրանց բացակայության արգասիքն է: Այս խնաստով որոշակի նշանակություն ունեն մասնականացման ցածր մակարդակը և այդ նորմերի ու սկզբունքների առաջադիմական զարգացման դեռևս ոչ կատարելագործված վիճակը: Ասվածի լավագույն ապացույցը շրջակա միջավայրի շարունակական քայքայվող վիճակն է:

2. Միջազգային էկոլոգիական իրավունքի պատմական զարգացման առաջադիմական բնույթը, ի թիվս այլնի, կայանում է նրանում, որ այդ գործընթացի չորս փուլերը ոչ թե առանձին-առանձին և հատվածային ժամանակաշրջաններ էին, այլ հանդիսացել են բնապահպանության համար մարդկության մտահոգության հենքի վրա կառուցված՝ փուլային, սակայն օրգանական և դիմամիկ կապի մեջ գտնվող՝ պետությունների հետևողական գործունեության ամբողջություն:

Միջազգային էկոլոգիական իրավունքի առաջադիմական զարգացման արդյունքում ձևավորվեց կայուն զարգացման հայեցակարգը, որի կարևորագույն բաղադրիչներից են՝ ներկա սերունդների պարտավորությունն ապագա սերունդների առջև. այնպիսի տնտեսական զարգացման ապահովումը, որտեղ շրջակա միջավայրի գերակա շահերի պահպանությունը պետք է ունենա իր առանձնահատուկ տեղը:

Միաժամանակ, հարկ է արձանագրել նաև, որ շնորհիվ միջազգային էկոլոգիական իրավունքի առաջադիմական զարգացման՝ ձևավորվեց մարդու բնության հանդեպ ունեցած պարտավորությունների կուտ համակարգ: Ակնհայտ է, որ այսօր մարդը բնության նկատմամբ «պահանջողից» վերածվել է դրա պահպանության համար անենապատասխանատու սուբյեկտի:

3. Բնության նկատմամբ մարդու ցանկացած քայլ և գործողություն պետք է լինի էկոլոգիապես պարկեշտ: Անճը մշտապես պետք է ղեկավարվի և վերահսկվի ներպետական և միջազգային իշխանական լծակներով օժտված հասարարական գրագետ և ակտիվ ներկայացուցիչների կողմից: Շրջակա միջավայրի որակի վատթարացման պատճառներից մեկը համաշխարհային հանրության կողմից համարժեք հակազդեցության բացակայությունն է: Այս փաստը, ինչպես նաև հաշվի առնելով էկոլոգիական վտանգների հիմնական մասի անդրասահմանային բնույթը, անհրաժեշտ է հետևողականորեն զարգացնել շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միջազգային համագործակցությունը և դրա միջազգային իրավական կարգավորման արդյունավետությունը:

4. Էկոլոգիական հիմնախնդիրների զտրալ բնույթը և դրանց լուծումը պահանջում են այնպիսի միասնական նորմերի և սկզբունքների ամրագրում, որոնցով պետք է ղեկավարվեն պետությունների միջազգային ընտանիքի բոլոր անդամները: Հասունացել է շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ոլորտում էկոլոգիական իրավունքի միասնական, ունիվերսալ միջազգային իրավական կողմից իրականացված ակտի ընդունման ժամանակը:

5. Էկոլոգիական վտանգները փոխկապակցված և անդրազգային են, դրանք չունեն սահմաններ և կարող են հաղթահարվել միայն բոլոր պետությունների համատեղ արդյունավետ համագործակցության արդյունքում, քանզի ժամանակակից աշխարհում էկոլոգիական աղետներն իրենց հետևանքների առումով համեմատելի են այնպիսի զտրալ խնդիրների հետ, ինչպիսիք են զանգվածային ոչնչացման զենքի տարածումը, միջազգային ահաբեկչությունը (այդ թվում՝ նաև էկոլոգիայի նկատմամբ), կլիմայի զտրալ փոփոխությունը, շրջակա միջավայրի վրա մարդկային ներգործության արդյունքով տեղի ունեցող տարերային աղետները և այլն:

6. Բնապահպանական հիմնախնդիրների մեծ մասի առկայության պատճառը, ի թիվս այլնի, թերզարգացած պետություններում տիրող աղքատությունը և զարգացման ցածրագույն մակարդակում գտնվելու հանգամանքն է: Վերջիններս պետք է իրենց զարգացման ուղիները դիտարկեն բացառապես բնության պահպանության հիմնահարցերի լուծման գործընթացին մասնակցություն ցուցաբերելու գիտակցությամբ: Այս եզրահանգումն իր արտացոլումն է գտել նաև Մրոքիոլմյան հռչակագրի տարրեր իրավադրույթներում, որոնց համաձայն՝ զարգացող և զարգացած պետությունների՝ միջազգային հանրության առջև ծառայած խնդիրների կարգավորման և լուծման մտանադիպ ռազմավարությունը հիմք դրեց միջազգային էկոլոգիական իրավունքի ամենահիմնական և ներկայումս տվյալ ոլորտը կարգավորող գրեթե բոլոր կոնվենցիաների հիմքում ընկած «ընդհանուր, բայց տարբերակված պատասխանատվության» սկզբունքի ձևավորմանը:

7. Արձանագրելով, որ Երկիր մոլորակի էկոլոգիական սահմանադրության հիմնական մեթոդաբանական հիմքը պետք է կազմի մարդու անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի և այլ էկոլոգիական իրավունքների դոկտրինան, միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ մինչ օրս մարդու՝ անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրավունքն ուղղակիորեն և հստակ ոչ մի ունիվերսալ միջազգային իրավական փաստաթղթում ամրագրված չէ: Գուցե նշված իրավիճակը պետք է բացատրել նաև նրանով, որ մարդու իրավունքների նախորդ սերունդների իրավունքների ամրագրման ժամանակ էկոլոգիական հիմնախնդիրները աշխարհում չունեին այն սրությունը, ինչ այժմ: Այսօր ձևավորված առողջ շրջակա միջավայրի իրավունքը, ինչպես նաև էկոլոգիական այլ իրավունքները ամբողջովին նոր և ինքնուրույն իրավունքներ են: Դրանք իրենց էությունը և՛ անձնական են, և՛ կոլեկտիվ, միաժամանակ պատկանում են և՛ յուրաքանչյուր մարդու, և կրում են համամոլորակային բնույթ: Կոլեկտիվ իրավունքները չեն նվազեցնում անհատի իրավունքներն ու ազատությունները: Դրանք միմյանց հետ փոխկապակցված են, թեև իրենց էությանը բավականաչափ տարբեր են: Անձնական իրավունքները մարդու բնական իրավունքներն են, դրանք նրան շնորհված են ի ծնե՝ որպես մարդու կեցության կարևոր արժեք: Կոլեկտիվ իրավունքները բնական չեն, քանզի ձևավորվում և հղկվում են այս կամ այն հասարակության կամ քաղաքակրթության կայացման պայմաններում: Մարդու էկոլոգիական իրավունքներն իրենց հույժ կարևորությամբ, համամոլորակային նշանակությամբ բոլորովին այլ կատեգորիա են: Առանց դրանց ավելորդ է խոսել առհասարակ մարդու կյանքի և զարգացման երաշխիքների մասին:

8. Մարդու՝ բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը հանդիսանում է մարդու կյանքի սահմանադրական իրավունքի տարրերից մեկը: Չարմանալի է, բայց այսօրեական զարգացումների պայմաններում անգամ դեռևս կան սահմանադրություններ, որոնցում կյանքի իրավունքն ընկալվում է միայն մահապատժի գոյություն կամ վերացում: Ներկա ժամանակաշրջանում կյանքի իրավունքի իրացման գլխավոր և առաջնային պայմանը բարենպաստ շրջակա միջավայրն է: Ընդ որում, այս հարցադրումը չպետք է ընկալել գոտ կենսաբանության դիրքերից. իրականում քաղաքացու՝ բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքն ինչպես կենսաբանական խնդիր է, այնպես էլ էկոլոգիական իրավական նորմերի կատարման պահանջ:

9. ՄԻԵԴ-ի պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի հետ կապված գործերի քանակը գնալով ավելանում է: Կարելի է կանխատեսել, որ ազգային մակարդակում շրջակա միջավայրի բարենպաստ պայմանների ապահովման արդյունավետ միջոցների բացակայության դեպքում հատկապես նախկին խորհրդային երկրներից ՄԻԵԴ ուղղված դիմումների թիվն էլ ավելի կավելանա: Ասվածի համատեքստում միանշանակ է, որ թեև Կոնվենցիայում շրջակա միջավայրի պահպանության իրավունքն

անմիջականորեն ամրագրված չէ, այնուամենայնիվ, այդ իրավունքի պաշտպանությունն այս միջազգային դատական առյանում իրողություն է: Զննված գործերը հասնում են մի քանի տասնյակի, ինչը նպաստել է այս ոլորտում նախադեպային իրավունքի ձևավորմանը: Կարելի է վստահաբար պնդել, որ ՄԻԵԴ-ն անողղակի ձևով ճանաչում է մարդու էկոլոգիական իրավունքները, սակայն Դատարանն այդ իրավունքների պաշտպանության լիարժեք կոնվենցիոն հիմք չունի, ստիպված է այս խնդիրը լուծել անողղակի կարգավորումներին հղում կատարելով, ինչը, բնականաբար, բավարար չէ մարդու էկոլոգիական իրավունքների պաշտպանությունը լիարժեք կերպով երաշխավորելու համար: Ցանկալի է անմիջական կարգավորում ունենալ նմանատիպ հիմնարար և անկյունարարային նշանակության փաստաթղթում: Վստահաբար կարելի է պնդել, որ հասունացել է 1950թ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից մարդու էկոլոգիական իրավունքների վերաբերյալ լրացուցիչ արձանագրություն ընդունելու ժամանակը:

Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Միջազգային էկոլոգիական վեճերի կարգավորման հիմնախնդիրները», Օրինականություն, ՀՀ Գլխավոր դատախազության գիտագործնական հանդես, Երևան, 2013թ. N 76, էջ 32-37:
2. «Կայուն զարգացման հայեցակարգը շրջակա միջավայրի միջազգային-իրավական պահպանության համատեքստում», Արդարադատություն, «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, Երևան, 2013, Հունիս 2(21), էջ 71-76.
3. «Էկոլոգիական անվտանգության սկզբունքը միջազգային էկոլոգիական իրավունքի արժեհամակարգում», ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր, Երևան, 1(71) 2014, էջ 13-22:
4. «Մարդու իրավունքների միջազգային իրավունքի համակարգային զարգացման դինամիկան և միջազգային էկոլոգիական իրավունքի արժեվորման խնդիրը», 21-րդ դար տեղեկատվա-վերլուծական հանդես, Երևան, 3(55), 2014թ. էջ 133-148:

АКОПЯН КАРИНЭ СТЕПАНОВНА ЭКОЛОГИЧЕСКИЕ ПРАВА ЧЕЛОВЕКА И МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЙ ИНСТРУМЕНТАРИЙ ИХ ГАРАНТИРОВАНИЯ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена одной из самых актуальных проблем международного публичного права – выявлению недостатков международного правового регулирования в сфере экологических прав человека и их гарантирования.

В процессе исследования изучены полномочия и функции международных институциональных структур по охране окружающей среды и судебных органов, выявлены особенности и недостатки их деятельности.

Научная новизна диссертации состоит в том, что автору удалось впервые в Республике Армения в контексте охраны окружающей среды проанализировать и раскрыть концепции становления и развития международного экологического права, а также выявить их особенности.

Научной новизной также характеризуется теоретические и прикладные положения, выносимые на защиту, основные выводы и законодательные пути усовершенствования соответствующей нормативно-правовой базы.

На основе изучения международных договоров и конвенций, а также других международных актов по охране окружающей среды в работе показаны концептуальные основы, конвенционные и институциональные механизмы гарантирования экологических прав человека.

Исследования вышеизложенных вопросов в диссертации сопровождаются комментариями и взглядами видных учёных-правоведов. Автор детально анализирует действующую международную практику, научно обоснованные теоретические подходы, представляет конкретные предложения:

1. Устав ООН позволяет утверждать, что он содержит в себе глубокие, «скрытые» политико-правовые предпосылки для стимулирования сотрудничества государств во всех областях международной жизни, в том числе и в сфере охраны окружающей среды. Подтверждением сказанному может служить тот факт, что сформированные в дальнейшем ООН специализированные органы, опираясь именно на Устав ООН, в качестве уставной цели, в числе прочих, предусмотрели также охрану и защиту окружающей среды.

2. Создание ООН, признание и гарантирование этой организацией международного принципа коллективной безопасности как международного правового императива, помимо прочего, способствовало формированию носящих характер *jus cogens* экологических прав человека, на основе концепции права человека жить в здоровой и благоприятной среде, и их признании как обязательств *erga omnes*. В диссертации эта позиция, в числе прочего, обосновывается тем, что экологические права человека, как нормы *jus cogens* (императивные), носят также универсальный характер, поскольку они касаются защиты общечеловеческих ценностей и содержание принципа экологической безопасности обязывает государства действовать так, чтобы, исходя из интересов международной безопасности, были исключены такие экологические потрясения, которые могут

нанести непоправимый и невосполнимый ущерб как другим государствам, так и международному сообществу в целом.

3. Право на здоровую окружающую среду, а также другие экологические права, обусловленные спецификой решения социальных проблем и возможностью гарантирования здоровой жизни и физического существования человека, являются абсолютно новыми и существенно отличаются от прав предыдущих поколений (личных, политических и коллективных). Экологические права, с учётом их особой значимости, носят общепланетарный характер. При глубоком пренебрежении ими бессмысленно вообще говорить о гарантиях жизни и развития человека.

4. Особое место, занимаемое экологическими правами в системе прав человека, обусловлено, в частности тем, что они самопроизвольно нашли своё отражение и во всех других отраслях, входящих в эту систему. Так, личные права определяют защищённость человека, его здоровья и имущества от незаконного вмешательства, в том числе и право на защиту от вредного воздействия окружающей среды. Политические права включают в себя, например, право лиц на участие в процессе вынесения решений, относящихся к экологии. Социальные и экономические права человека призваны обеспечивать достойный уровень его жизни, с учётом экологических характеристик, права на экологическое образование и так далее.

5. У понятия «экологическая безопасность» есть конкретное юридическое содержание, состоящее из нескольких компонентов. К ним относятся: а) обязательство государств обеспечивать охрану окружающей среды, рациональное использование природных ресурсов, их качественное воспроизводство таким образом, чтобы не были ущемлены права и законные интересы не только отдельных государств, но и мирового сообщества; б) каждое государство обязано действовать так, чтобы смягчить негативное влияние на окружающую среду в равной мере как на национальном, региональном, так и на глобальном уровнях; в) международные договорные обязательства, гарантирующие экологическую безопасность человека, являясь компонентом международного публичного права, исходя из своей сущности, специфики и целевой направленности, должны быть признаны ценностью высшей категории.

Диссертационное исследование имеет важное теоретическое и практическое значение. Основные выводы, предложения и рекомендации автора могут исследоваться в научной деятельности, в учебном процессе подготовки и переподготовки юридических кадров, в том числе при преподавании спецкурсов «Экологические права человека», «Экологическая безопасность и пути минимизации ее угроз», «Международно-правовые гарантии экологических прав человека».

Результаты исследования могут использоваться также в законотворческой деятельности.

ENVIRONMENTAL HUMAN RIGHTS AND INTERNATIONAL LEGAL INSTRUMENTS OF THEIR GUARANTYING

ABSTRACT

The dissertation is devoted to one of the most actual problems of international public law – the identification of the international legal regulation's deficiencies in the environmental rights and their guarantee.

During research the powers and functions of international institutional structures for the protection of the environment and the judiciary are explored, as well as it has been identified the peculiarities and weaknesses of their activities.

The scientific innovation of the dissertation is that the author has succeeded for the first time in the Republic of Armenia in the context of environmental protection to analyze and disclose the concept of formation and development of international environmental law, as well as to identify their characteristics.

Scientific innovation is also characterized by theoretical and practical provisions for the defense, the main findings and legal ways to improve the relevant legal framework.

Based on the research of international agreements, conventions and other international acts for the protection of the environment it has been shown the conceptual framework, conventional and institutional mechanisms to guarantee environmental human rights.

Studies of the above issues in the abstracts are accompanied by comments and views of famous lawyers. The author analyzed in details the existing international practice, evidence-based theoretical approaches presented specific proposals:

1. The UN Charter allows us to state, that it contains a deep, "hidden" political and legal preconditions for stimulating cooperation of the states in all areas of international life, including the field of environmental protection. As a proof of the above may be the fact that formed in the future of the UN specialized bodies, namely relying on the UN Charter, as the statutory purpose, among others, also have provided security and environmental protection.

2. Establishment of the UN, recognizing and guaranteeing by this organization of the international principle of collective security as an international legal imperative, among other things, contributed to the formation bearing *jus cogens* nature of environmental human rights, based on the concept of human rights to live in a healthy and supportive environment, and their recognition as *erga omnes* obligations. In the dissertation, this position, among other things, based on the fact that environmental human rights as *jus cogens* (imperative) norms also take universal character, as they relate to the protection of human values and the content of the principle of ecological security obliges states to act as that, on the basis of the interests of international security, were excluded such

ecological shocks that can cause irreparable and irreversible damage as to other states and also to the international community in general.

3. The right to a healthy environment, as well as other environmental rights caused by specificity of solving social problems, and the ability to guarantee a healthy life and physical human existence, are entirely new and are substantially different from the rights of previous generations (personal, political and collective). Environmental rights, by taking into account their special significance, carry out planetary nature. By deep disregard with them, it's meaningless at all to speak of life guarantees and human development.

4. A special place, that environmental rights has in the system of human rights, is due in particular to the fact, that they spontaneously reflected in all other sectors belonging to the system. So, individual rights determine the human security, their health and property from illegal interference the right to protection from the harmful effects of the environment. The political rights include, for example, the right of individuals to participate in the process of making decisions related to the ecology. The social and economic human rights are designed to provide a decent level of their life, taking into account the ecological characteristics, rights of ecological education and so on.

5. The concept of "environmental security" has a specific legal content, which consists of several components. These include: a) the obligation of States to protect the environment, natural resources, their reproduction quality in a way that had not been infringed the rights and legitimate interests of not only separate states, but also the world community; b) each state has the duty to act to mitigate the negative impact on the environment in equal measure at the national, regional, and global levels; c) international treaty obligations ensuring the environmental safety of a person, being a component of public international law, based on their nature, specificity and *targeting*, should be recognized the value of the highest category.

The present research has an important theoretical and practical significance. The main conclusions, suggestions and recommendations of the author may be studied in scientific activities in the educational process of training of legal personnel, including the special courses such as "Environmental Human Rights", "Environmental Security and Ways to Minimize its Risks", "International Legal Guarantees for Environmental Human Rights.

The results can also be used in lawmaking activities.



